ՑՈՒՑԱԿ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ (Формулярный списокъ)

ԿԱՄ

ՀԱՄԱՌՕՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻՈՑ

Սկսեալ ի 1833 ամէ ց 1896 ամն.

Ա. Ի 1833 *ամի ի* 10-*ն մարտի ծնեալ լինելով յԱբրահամ ա-ւագ քահանայէ Ցէր Կարապետեան Սմբատեանց հօրէս և ի Ջաւահիր անուն մօրէս և ի* 18-*ն նոյն ամսոյ՝ յաւուր տօնի Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ (մուտն ի վիրապն) մկրտեալ, անուանեալ եմ յաւազանէն՝ Գրիգոր. ըստ այսմ, ի սոյն* 1896 *ամի, յամսեանն մարտի մտանեմ ի* 63 *ամն կենացս։*

Բ. Ի 1840 *ամէ ց* 1845 *ամն ուսեալ եմ զնախապատրաստական դիտելիս ի հօրէս*[1]*), այն է զայբուբենն, զընթերցումն գրոց, ժամագիրք, կտակարան և այլն, և ապա* (1845—1847) *յարքունի գաւառական ուսումնարանին* (уѣздное училище) *Նախիջեւան քաղաքի։*

Գ. Իսկ ի 1847 *ամի, ըստ միջնորդութեան հոգելոյս հօրեղբօրս՝ Աւետիս քահանայի*[2]*), և հրամանաւ երջանկայիշատակ*

---

[1]) Ցէր Աբրահամ հայրս (1825) դպրութեան և երիտասարդութեան ժամանակը այնքան ընթերցասէր է եղել, որ թերականութիւն սովորելու համար գնացել է մինչեւ Կ. Պոլիս, ուր Արապեան Ազուչեխցւոց տպարանում մի միայն ուսումնասիրութեան նպատակաւ, քանի տարի ծառայելով և ոչինչ չահանելով, ապա 1830 թուին՝ վերադարձել է Ֆրխես և դիմել Ներսէսեան նորակառոյց դպրոցի վարչութեանը, և այս տեղ հասակի մեծութեան պատճառաւ չընդունելով, գնացել է Արցախեցի համբաւաւոր Յովսէփ վարդապետի մօտ, որից և առել է իւր ուսումն կրօնագիտութեան։

[2]) Աւետիս քահանայն Սմբատեանց Ըհանմամուտ դիւղի, իբրեւ հմուտ հասկացող ու խօսքի տէր մարդ, յայտնի էր բոլոր Նախիջեւանայ գաւառի հայ ժողովրդոց։